ձակ եւ խուռն բանակի միջով, դեռ վերջ չկար: Բայց մղդսի Թորոսը — այսպէս էր իմ առաջնորդի անունը — դեռ գոհ չէր վանքի այն տարոայ «հունձքով»՝ նա գտնում էր ուխտաւորների թիւը շատ պակաս, անցեալի հետ համեմատելով:

— Վատացա՜ն ժամանակները, աղա, — ասում էր նա խորին կերպով հոգոոց հանելով: — Առաջ լաւ՛ էին տարիները. կը տեսնէիր, այստեղ սար, ձոր, դաշտ, ասեղ գցելու տեղ չկար, ամէնը բռնած կը լինէր ուխտաւորներով: Հիմա նրա կէսը, կէսի կէսը չկար էլ ինչո՞վ պէտք է ապրես: Տասներկու գլուխ քուլֆաթ կայ իմ տանը, ամէնից պստիկը հինգ տարեկան է: Հաց կ'ուզեն, հալաւ կ'ուզեն, որտեղի՞ց բերես: Ինչ էլ որ ուխտաւորներից ձեռքդ է գալիս, մեծ բաժինը մեր հայր սուրբերը խլում են. թէ չտաս, վանքի գիւղից դուրս կանէն: Ի՞նչ պէտք է անես նրանից յետոյ...

Մի քանի րոպէ տխուր լռութիւնից յետոյ մղդսին շարունակեց .

— Իմ տղերքը իմ բախտից բոլորն էլ մարմնով ողջ դուրս եկան, գոնեայ մէկն էլ «խեղճ» չեղաւ, որ հօր դարդին դարման աներ...

Ես սարսափեցայ, լսելով հօր մի այսպիսի անգութ ցանկութիւնը, որով կամենում էր, որ իր զաւակներից մէկը «խեղճ» լինէր, այսինքն սուրբ աստուածածնի հրետաւոր ախտաւորներից մէկը լինէր, մարմնով այլանդակուած, որ կարողանար «հոր դարդին դարման անել»...

— Դու կ'ուզէի՞ր, որ մէկը «խեղճ» լինէր, — կտրեցի ես մղդսու խօսքը:

— Ինչպէ՞ս չուզես, աղա: «Խեղճին» ամէն անգամ զանազան երկրներ պտտացնելիս, կը տար ինձ աւելի քան հինգ հարիւր ղուրուշն. դա բաւական էր իմ տանը մի տարոայ համար: Հիմա ի՞նչ բանի են պէտք մէկելները, որ ողջ են, որ ձեռք եւ ոտք ունեն: Նրանցից խէր (օգուտ) չկայ...

— Ինչո՞ւ ես դու ցանկանում, որ «խեղճը» անպատճառ քո որդիներից մէկը լինէր. այս վանքում խօ շա՞տ կայ, որին ուզենաս կարող ես տանել ման ածել եւ փող հաւաքել:

— Կարող եմ: Բայց դու կարծում ես, որ մեր հայր սուրբերն իրանց հօր հոգու համար կը տա՞ն ինձ «խեղճին» ման ածելու: Չէ՛, եղբայր: Դրա համար նրանք կը վերառնեն աւելի՝ քան թէ ես կը հաւաքէի: Ինձ կը մնար իմ չարչարանքը: Օրինակ քեզ, մղդսի Յակօն այս տարի տարաւ «խեղճերից» մէկին Վանայ երկրում ման ածելու. նա բերեց հազար ղուրուշից աւելի. բայց հարիւր ղուրուշ չմնաց իր ձեռքում: Բայց երբ «խեղճն» իմ մսից եւ արիւնից կը լինի, այն ժամանակ վարդապետները չեն կարող պարպել իմ քսակը...